ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 22203; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 11 >> փետրվարի 2014 թվականի N 18 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 46Բ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ, ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 46Բ հասցեի կիսակառույց բնակելի տան (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2296621 վկայական) շինարարական աշխատանքներն ավարտելու համար պահանջվում են զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 46Բ հասցեի 221,20 (երկու հարյուր քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույց բնակելի տունը՝ իր կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 483,0 (չորս հարյուր ութսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասով, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 017 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 221,20 (երկու հարյուր քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին հաստատել 1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 483,0 (չորս հարյուր ութսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար 1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2100000 (երկու միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան_ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2014թ. փետրվարի 11
ք.Գյումրի